

ՔԱՐՏԱՆՈՒՄ
 Պոլիտիկոսի համար
 Տարեկան
 Վեցամսեայ
 Արտասահմանի համար
 Տարեկան
 Վեցամսեայ
 Անկերիկայի համար
 Տարեկան
 Վեցամսեայ
 ԿԱՆԻՍԻՎ ԿՃԱՐԹԵԼԻ
 Մասնագետի տողը առաջին
 գրեսին համար 40 սակարկի
 հ. իսկ վերջին երեսին համար
 20 սակարկի հ. երեսին
 սեղի անգլաներու համար
 20 Օլո գեղջ կրչայ :
 Վառնայի համար ձեռք 10 սակարկ

ՇՆՆՈՒՄ

R. P. Kalémcarlian
 (Autriche)
 Mechitaristengasse W. 4
 Vienne

Կ. և. զրաւլ զրկի
 Պոլիտիկոսի համարի
 Редакция на «Вестникъ»
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 Կոմպոզիտի և լուսատեխնիկ
 Արտասահմանի ձեռք
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պոլիտիկոսի համար ձեռք
 (15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ՀԱԼԱԾԱՆՔ ԿԱԹՈՒՆԻԿ ԿՂԵՐԻ ԴԵՍ

Կաթոլիկ հոգեւորականութիւնը իր անհամբերող ոգիով և ժողովրդներին հոգին ու միտքը տիրապետելու անսահման ձգտումներով անհազին փաստներ է հասցրել եւրոպական ժողովուրդներին : Ամենից շատ փաստողները եղել են Լատինական ցեղերը՝ Ֆրանսացիք, իտալացիները և իսպանացիները : Կաթոլիկ կղերականութիւնը իր միջից ծնել է ինկվիզիցիան, որի տարածած սարսափը մինչև օրս էլ դեռ չէ հեռացել նրա ճիրաններում տանջվող ժողովրդների յիշողութիւնից : սակայն է ճիշդութեան հռչակաւոր ընկերութիւնը որի անդամները ցեցերի պէս միովելով ժողովրդների մտի մէջ՝ ծծում էին և շարունակում են ծծել նրանց ամենակենսական հիւթերը :

Մի խօսքով այդ հոգեւորականութիւնը կատարեալ պատուհաս է եղել եւրոպական ժողովրդների համար և այդ պատուհասի հասցրած չարիքները մանրամասնօրէն թւելու համար յրազարական սրնակները չեն բաւականանայ : բաւական է միայն շեշտել որ եւրոպական յառաջողւմ մտքի ներկայացուցիչները հալածվելու տանջվել են գրանց ձեռքով, եղբայր եղբոր դէմ զինվել է գրանց գրողումով, թագաւորները իրենց ժողովուրդների արեան մէջ լողացել են գրանց քաջալերանքով :

Բայց ամեն ճնշումի, ամէն տիրապետութեան սահմանը կայ : հասաւ և կաթոլիկ կղերին սանձահարելու : նրա զօրութիւնը ոչնչացնելու ժամը : Այդ սկըսվելով Լիւթերից, հետզհետէ ստատիճանաբար զօրեղացաւ, ու այսօր, մեր օրերում նոյն լատինական ժողովուրդները բացարձակ հալածանք են սկսել կաթոլիկ կղերականութեան դէմ :

Իտալիան պապին զրկեց իր աշխարհական իշխանութիւնից, Պրանսան՝ առաջին յեղափոխու

թիւնից սկսած, սկսեց ճնշել գրանց և դեռ երեկ աւելի արմատական միջոցներ ձեռք առաւ կղերականութեան ազդեցութիւնը ոչնչացնելու համար : Այսօր Սպանիան է սկսել հալածանքը իր կաշին քերթող, իր տունը քանդող կղերականութեան դէմ : Ժողովուրդը ամէն տեղ կատաղի ցոյցեր է անում : կառավարութիւնը կարծես մտադիր է ժողովրդին բաւարարութիւն տալ և իսպանիան ազատել ճիզլիթների ճիրաններից :

Եւ այդ այն իսպանիան է, ուր ինկվիզիցիան շատ խոր արմատներ էր ձգել և թագաւորների պաշտպանութիւնը ու ժողովրդի հիացմունքն էր վայելում :

Ինչ ուզում է թող անի պապը : կաթոլիկ կղերի օրհասական րուպէն մտանում է : որչափ սօցիալիստ դառնայ Պետրոսի ծերունի փոխանորդը, ժողովրդների, ամբողջի սրտին ու մտքին տիրապետելու համար, էլ ոչինչ չի կարող անել : Պապերը այսուհետեւ ոչ միայն արեգակներ չեն լինելու աշխարհի համար, այլ և պարզ պլալացող աստղեքանդ :

ԱՄՐԾ

ԿՂԵՐԻ ՈՒԺԸ

Թաւրիզում կան մի շարք համակրելի ընկերութիւններ, ի թիւս որոց եւ «Հակալիզիական ընկերութիւն»ն, որը ամիսը մի անգամ ձրի դասախօսութիւն է տալիս : բացառելով հասարակութեանը ալիոյի պատճառած փաստները եւ յորդորելով որ իւրաքանչիւր անհատ հրաժարի գործածելուց այդ թոյնը, որ սերունդներ է ոչնչացնում եւ անթիւ շարադրութիւնների ու ոճիրների պատճառ է գառնում : Այս հանրագոտւ ընկերութիւնը ունի բաւական ստուար թւով անդամներ, որոնք իրանց ստորագրութեամբ ու յաւիտենական երգումով երես են դարձրել այդ մարկութեան սիրիցեալ թշնամուց եւ յոյս կայ թէ շատերը այսուհետեւ պիտի հետեւեն գրանց օրինակին եւ մէկ օր բոլորը ձեռք ձեռքի տւած պիտի ստանն այս ընկերութեան պանծալի բարոյական յաղթանակի տունը : Ընկերութիւնը չը բաւականանալով միմիայն սեղիս հայ-ազգաբնակիւթեան նեղ շրջանով

ուզեց իր ճիւղերը տարածել և մահ մէտական տարրի մէջ : Ի հարկէ յոյս ունենալով որ դժուարութեան չի պիտի հանդիպի, որովհետեւ նրանց կրօնը արդէն հակալիզիական սկըզբունք է քարոզում : բայց ցաւօքսրտի պէտք է յայտնել, որ ընկերութիւնը մի անսպասելի անյայտութեան հանդիպեց շնորհիւ մոլեռանդ և նախապաշարած մահմետական կղերի, որը հակալիզիական ընկերութեան համեմատական տարրին մտնելու ինչ որ կրօնական յետին մտքերով բացատրեց եւ գահաժառանգի միջոցաւ իսպառ արգիւնց իր ժողովուրդին այս մարդկանց հետ որ եւ է յարաբերութիւն ունենալ :

Դէպքը այս կերպ պատահեց : վերոյիշեալ ընկերութեան վարչութիւնը ծրագրել էր մի երեկոյի պարսիկների համար, որտեղ պէտք է դասախօսել հալոյի փաստակարարութեան մասին եւ վերջում մողական լապտերով ցոյց տրւէր զանազան պատկերներ : գլխաւորապէս առողջապահական ճիւղի վերաբերեալ : Այդ մասին արդէն փողոցներում յայտարարութիւն ցրուած, տոմսակները համարեա բոլորը վաճառուած էին : Տոմսակները մատչելի գներով էին, որից գոյացած արդիւնքը ընկերութիւնը գործադրում է ալիոյի վերաբերեալ ձրի բրոշուրներ հրատարակելուն : Յանկարծ լուրը հասնում է մահմետական հոգեւորականութեան սկանջը, որը լեղապատառ իրան պատէպատ է խփում : ամեն հնար գործ դնում, իր ժողովրդի վերահաս կորուստի առաջն առնելու եւ այդ նրան յաջողում է : Գահաժառանգը արգիւրում է այդ երեկոյից : Ի զուր ընկերութեան նախագահը մողական լապտերը ձեռին շտապում էր գահաժառանգի եւ կրօնապետի մօտ, բացատրելով երեկոյի նպատակը, ցոյց տալով այն պատկերները ինչ որ պէտք է ցոյց տրւէին երեկոյից : հակացնելով այնտեղ խօսակիթի օգտակար կողմերը : Այդ բանը չէր թափանցում նրանց խաւար մտքի մէջ : կամ զուցէ թափանցում էլ էր, բայց իրանց շահը պահանջում էր տղէտ ձեւանալ եւ փաստակար գտնել այն, ինչ որ իրանց «կրօն» էլ էր օգտակար թելադրում : Ի զուր չէ ասել հին առածը : «ուր որ կղերն երեւայ, այնտեղ եօթը տարի կանանչ չի բուսնի» : Մեծ է այսօր կղերի ուժը եւ այդ բռնապետութեան սեւազրուխ ոտիկանների դէմ պէտք է ուժով դիմադրել, ինչպէս աշխարհական բռնապետների ոտիկանների դէմ :

ՄԻՐԶԱ

Թաւրիզ, 10 Մարտ

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՒ ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ Բ. ԿՕՄԻՏԷՆ

Միւնխէնէն եւրոպայի հայ ուսանողական համագումարը հետեւեալ հեռագիրը զրկած է Մակեդոնական Բարձրագոյն Կոմիտէին :

«Եւրոպայի հայ ուսանողութիւնը իր ջերմ համակրանքները կը յայտնէ ձեզի : Հայաստանի զաւակները, թրքական բռնութեան զոհերը, իրենց արիւնլուայ հայրենիքը աչքի առջեւ ունենալով շեն կրնար մտնալ և Մակեդոնիան, իրենց երկրորդ հայրենիքը՝ արիւնի կոխի և յոյսերու տէսակէտով :

ԿԷՅՅԷ՛ ՄԱԿԵՂՈՆԻԱՆ»
 Մակեդոնական Բ. Կոմիտէն հետեւեալ պատասխանը զրկած է Հայ Ուսանողական Միութեան համագումարին :

«Խորին կերպով յուզուած՝ մեր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնենք մեզի պէս դժբաղդ մեր եղբայրներուն : ոչ մէկ ճնշման և ոչ մէկ ուժի առջեւ չի պիտի ընկճուինք, հպարտ ըլլալով որ քաջ հայերու հետ թեւ թեւ տուած պիտի շարունակենք ազատութեան վիճ կոխը և ոչ հեռու ապագային պիտի յաղթենք ընդհանուր թշնամին :

ԿԷՅՅԷ՛ ԱԶԱՏ ՀԱՅՍՏԱՆԸ»
 Ետտ ուրախալի է որ մեր ուսանողութիւնը, հայ ժողովուրդի յուսատու տարրը այդչափ համակրանքով վերաբերուած է գէպի բալղակից ժողովուրդի մը յեղափոխական մարմինը :

Եւս առաւել ուրախալի է որ հայ ուսանողութեան արաւայայտած համակրանքը այդչափ զօրեղապէս արձագանք գտած է մակեդոնացի յեղափոխական վարիչներուն սրտերուն մէջ :

Մենք կը մաղթենք որ մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնը անուսան կերպով շարունակէ իր ուսերուն վրայ առած ազատութեան ծանր գործը, փրկէ իր հայրենիքը իր անտանելի լուծէն որ օր աւուրաւելի կը ծանրանայ և աւելի զօհեր կը ծղմէ իր անեղբակայելի ծանրութեանը տակ :

Հոչակաւոր ոռու փրկիստիա եւ գրազէտ Թօլսթոյը ձարին նամակ մը գրած է կառավարական վերջին խնամութիւններու եւ կրօնական հալածանքներու առթիւ: Թանկ մէջ այդ նամակին պատճէնը կայ. սակայն մենք միայն անոր բովանդակութիւնը կը գնենք հոս:

Թօլսթոյ մտաւորապէս հետեւեալը կըսէ ձարին եւ իր խորհրդականներուն.

Նորէն սպաննութիւններ, կրկին խրտուստներ, պատիժ, արսափ, զորպարտութիւններ, սպանալիքներ, մէկ կողմէն, իսկ միւս կողմէն զոհողութիւն, վրէժխնդրութեան փափագ, ասելութիւն, կրկին Ռուսիա երկու թշնամի բանակներու բաժնուած է, հուզեն աւելի սոսկալի ոճիրներ գործել:

Կարելի է որ այդ բոլորը ճնշէք, սակայն կրնայ ըլլալ որ զօրքերը, ոստիկանները դգան թէ ինչ ծանր ոճիրներ գործել կուտաք իրենց եւ այլեւս ձեզի հնազանդելէ դադրին: Ենթադրենք որ ճնշեցիք, սակայն ատով ըմբոստութիւնը չի պիտի մարի. ան վաղ թէ ուշ նորէն պիտի պայթի աւելի բուռն կերպով եւ աւելի մեծ վրէժ պիտի պատճառէ ու աւելի զոռութի ոճիրներ պիտի գործել տայ:

Կը կարծէք թէ այս խոսքով ինչն էրը քանի մը չար մարդոց գործեր են, որոնք ժողովուրդը կը գրգռեն. բայց արդէն 30 տարի է որ այս խոսքով ինչն էրը անգլի կուսնեան, զուք զանոնք կը կախէք, հազարաւորներով բանտերը կը լեցնէք, սակայն ատոնց անդամներու թիւը հետզհետէ կը ստուարանայ եւ զժողովութիւնը այնքան զօրեղցած է որ արդէն միլիօնաւոր զործաւորներ իր կողմը գրաւած է. ոռու ժողովուրդին ամենամեծ մասը:

Գտան տարուան մէջ կառավարութիւնը միշտ ետ գացած է ու աւելի հեռացած ժողովրդէն ու անոր պահանջներէն. մեր զժողովութիւններու պատասխանատուն խոսովարարները չեն, այլ զուք կառավարական

մարդիկ, որ ձեր բուսական հանգստութեան մասին միայն կը մտածէք:

Այն ինչ որ հիմա ձեզ ընել պէտք է, շատ դիւրին է: Պէտք է գիւղացիներուն ոռու բոլոր քաղաքացիներու իրաւունքներուն հաւասար իրաւունքներ տալ, պէտք է պաշարողական վիճակը շնչել, որը ամէն զազանութիւններու, աղտոտութիւններու մայրն է. պէտք է կրօնի եւ խօսքի ազատութիւն տալ ամէն զաւանու թեան պատկանողներուն: Այս կոչը ընողը ես եմ, Լէօն Թօլսթոյը, բայց նոյնը կը փափագին եւ ամէն անձնուէր, աղէկ ու մտացի ոռուները:

ԵՐԿՈՒ ԹՈՒՐԲԵՐՈՒ ԽԱՂԸ

Քէմալ-Ալիին անուն թուրք երիտասարդ մը օրին մէկը կը ձգէ Պոլիսը եւ ժընէվ կը մեկնի հետը տանելով կարգ մը պետական թուղթեր: Քէմալ ժընէվի մէջ «Վաթան» անուն թերթ մը կը հիմնէ եւ կը սկսի հարուածել Սուլթանը եւ իր կառավարելու ձեւը:

Սակայն «Վաթան» այնքան լաւ տեղեկութիւններ կը ստանայ իր թուղթի մէջ անցած դարձածներուն վրայ եւ զանոնք հրատարակութեան տալով ա՛յնքան անձկութեան կը մասնէ Սուլթանը որ, կուզէ գիտնալ թէ ո՞վ կը հաղորդէ Պոլսէն այդ լուրերը. ուստի կորոշեն արտաքին գործոց նախարարութեան քարտուղար համարական հրէն փաստաբան Փուատ Ալի պէյը, 25 տարեկան երիտասարդ մը, գազտնի պաշտօնով ժընէվ զրկել որպէս զի հետամուտ ըլլայ եւ գաղտնիքը ձեռք անցնէ:

Չուգազիպութեամբ թէ դիտմամբ Ալի Փուատ պէյ ճիշդ այն անձը եղած է որ յարաբերութեան մէջ կը գտնուէր «Վաթան» ի

խմբագրին հետ եւ ինքն էր որ այդ գաղտնիքները եւ պաշտօնաթուղթերը իր պաշտօնին բերմամբ ձեռք ձգելով կը հաղորդէր ի ժընէվ:

Փուատ գոհ սրտով կը մեկնի Պոլսէն եւ կերթայ կը միանայ Քէմալ-Ալիի ու երկուքը մէկ ցնծութեամբ կապրին Սուլթանին դրամովը եւ յետոյ Բարիզ կուգան:

Փուատ Բարիզի դեսպան Միւնիր պէյին դիմելով կը ծանօթացնէ անոր իր պաշտօնին բնութիւնը եւ կը յայտարարէ թէ սկսած է հաւանեցնել Քէմալը որ Պոլիս դառնայ: Միւնիր պէյ կողմէ Փուատի՝ անոր դրամ տալով եւ միջոցներ ու մեքենայութիւններ սորվեցնելով, միւս կողմանէ Միւնիր պէյ կը տեղեկագրէ Երլազլի պալատը ուրկէ հրահանգ կուգայ իրեն կարելին ի գործ դնել երկուքը մէկ Պոլիս զրկելու համար:

Վերջապէս Փուատ մարտ 31 ի օրը կը դիմէ դեսպանատուն եւ կը յայտարարէ թէ՛ Քէմալ համոզուած է Պոլիս դառնալու կը խնդրէ որ անպարեն:

Յաջորդ օրը Բարիզի թուրք հիւպատոսը Ահմէտ ձէմիլ պէյ կայարան կառաջնորդէ զանոնք եւ ճամբու տոմսակներն առնելով Քէմալի կը յանձնէ 350 Ֆրանքի չափ գումար մը, իբր ճամբու ծախք, եւ Փուատի ալ նամակ մը՝ ուղղուած Երլազլի պալատան քարտուղարին եւ զանոնք շոգեկառք կը դնէ:

Ճիշդ այն պահուն որ շոգեկառքը պիտի մեկնէր, Փուատ եւ Քէմալ կիջնեն վակոնէն եւ սոմսակներին վերագարձնելով հիւպատոսին կը յայտարարեն թէ կը մերժեն Պոլիս դառնալու կառնեն

կը քալեն առանց դրամը վերադարձնելու:

Հիւպատոսը երկու տոմսակներու փոխարժէքը վերստանալով շոգեկառքի վարչութիւնէն, եղելով թիւնը կը հաղորդէ դեսպանին որ ոստիկանութեան բողոք մը կուտայ այդ երկու անձերուն դէմ իր վստահութեան զեղծում գործողներու եւ ձերբակալուելին կը խնդրէ:

Ապրիլ 9 ին Փուատ եւ Քէմալ կը ձերբակալուին ու կը ներկայանան հարցաքննիչ դատաւոր Տը Ֆալի որուն կը յայտարարեն թէ իրենց յանձնուած գոց նամակէն կասկածելով է որ մերժած են Պոլիս դառնալ ու պահովարար «խորհրդաւոր սուրճին» պիտի արժանանան, իսկ գալով 350 Ֆրանքին, արդէն սպառած է այն եւ սանթիմ մը անգամ չունին քոլերին:

Հարցաքննիչ դատաւորը նամակը ուղեւորով գտած է հետեւեալ տողերը:

Կա, ս. պալատան ընդհանուր քարտուղարին Կ. Պոլիս

Ձեր հեռագրին համաձայն կը զրկեմ Փուատ եւ Քէմալ Էֆէնիները որոնք արժանացած են կայսերական ներման:

Վճարեցի անոնց օթեւանին պարտքերը եւ մինչեւ Պոլիս ճանապարհածախսը:

Օսմանեան դեսպան Բարիզի Միւնիրի Պէթ

— «Գիտեմ թէ ինչ ըսել է այդ ներուժը, կը յաւելցնէ Քէմալ, այն «խորհրդաւոր սուրճին» է զոր մեզի պիտի հրամցեն անմիջապէս որ ձեռք անցնինք. Շատեր եւ նա մտնաւանք երիտասարդ թուրքեր վայելցին այդ սուրճը ու այսօր մէջտեղ չկան»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՄԱՆԴՆԵՐԸ (ԿԻՒԻ ՏՐ. ՄՕՊԱՍԱՆ)

Պարոն Լանթէն իր պաշտօնակցին տունը, երեկոյթի մը առթիւ, հանդիպեցաւ դեռատի աղջկան մը, եւ իսկոյն գրաւուեցաւ անով:

Օրիորդը գաւառական վարժապետի մը աղջիկ էր. քանի մը տարի առաջ հայրը մեռաւ եւ մայրը զինքը Բարիզ բերաւ ու, ամուսնացնելու տենչով, իր բնակած թաղին մէջ գլուխուղ ընտանիքներու հետ բարեկամութիւն կը պահպանէր:

Մայր ու աղջիկ աղքատ, բայց համեստ, ազնիւ եւ հեզ էին: Գեոատի օրիորդը կանացի այն ազնիւ տիպարներէն մին էր, որուն իր կեանքը յանձնել կերպով ամէն մէկ ազնիւ երիտասարդ:

Աղջկան պարզ գեղեցկութեանը մէջ հրէշտակային մաքրութեան հրապուրը կը նկատուէր, իսկ շուրթե-

րուն վրայ մշտապէս խաղացող գրեթէ աննշմարելի ժպիտը կարծես անոր սիրտը կանդաղարձնէր: Ամէնքը զայն կը գովաբանէին. ով զինքը կը ճանչնար՝ կըսէր. զանի առնողը երջանիկ պիտի ըլլայ: Ասկէ աղէկ կին չի գտնուիր:

Պ. Լանթէն, որ ներքին գործոց նախարարութեան գրասենեակի մեծ պաշտօնեաներէն մին էր, եւ տարեկան 3.500 Ֆրանք կստանար, մեր օրիորդին ձեռքը խնդրեց ու ամուսնացաւ:

Լանթէն շատ երջանիկ էր. դեռատի կինը այնպիսի հմտութեամբ մը տունը կը կառավարէր, որ կարելի էր ըսել թէ փարթամ կեանքով մը կապրէին: Տիկինը այնչափ հաճոյալի, սիրալի էր ամուսնոյն համար, որ Լանթէն ամուսնութենէն վեց տարի վերջը, զայն սովորեցնէր աւելի կը սիրէր:

Տիկինի երկու յատկութիւնները միայն չէր հաւնէր Պ. Լանթէն. ան շատ կը սիրէր թատրոն եւ կեղծադամանդներ:

Տիկնոջ բարեկամութիւնները, համեստ պաշտօնեաներու կրկնէր էին,

անգագար նոր թատերախաղերու ներկայացման կը կանչէին զայն, եւ ան ալ կամայ ակամայ իր ամուսնոյն կը խնդրէր իրեն ընկերակցելու: Պ. Լանթէն ալ տիկինէն կը խնդրէր որ զինքը հանգիստ ձգէ եւ բարեկամութիւններուն հետ երթայ, որոնք վերագարձին կրնային տիկինը մինչեւ տուն հասցնել, Տիկինը երկար ատեն չը համաձայնեցաւ, այնքան գտնելով այդ ձեւով թատրոն երթալ. բայց վերջը համաձայնեցաւ, մասամբ ալ ամուսնոյն հաճոյալի ըլլալու համար:

Պ. Լանթէն շատ գոհ մնաց: Թատրոնի սէրը տիկինի մէջ փայլելու զգացումները արթնացուց. ճիշդ է, զգեստները նորէն պարզ էին ինչ պէս առաջ, բայց ինք շատ ճաշակով կը հագուէր, ու այդ պարզութեանը մէջ շատ դիւրիչ ըլլալով հանդերձ վարժուեցաւ կեղծ գոհարներէ զարդարանքներ կրել ականջներուն, վզին եւ գլխուն վրայ: Պ. Լանթէն, որ շատ ալ չէր վշտանար իր կնոջը դէպի կեղծ աղամանդները տաճած սիրոյն համար, յաճախ կըսէր.

— Գիտե՛ս, սիրելիս, երբ միջոց չունիս իսկական սոգամանդներ ունե-

նալու, ամենէն աղէկ զարդը կըլլայ քու գեղեցկութիւնդ եւ նրբութիւնդ. ատոնք ամենէն հազուագիւտ գարդերն են:

Տիկինը կամացուկ եւ ժպտալով կը պատասխանէր.

— Ի՞նչ ընեմ. աս ամէնը կը սիրեմ. գիտեմ որ դու իրաւացի ես. բայց չեմ կրնար փոխուել. Ես թանկազին իրերը պիտի պաշտէի:

Երբեմն դեռատի տիկինը իրիկունները, թէյի սեղանի շուրջը նստած սեղանի վրան կը դնէր իր այսամանդներու կաշիէ պահարանը եւ կը սկսէ զանոնք դիտել այնպիսի ոգեւորութեամբ մը, որուն մէջ կարծես զագտնի հրճուած մը կար պահուած: Ու մանեակներէն մին դնելով ամուսնոյն վզին խնդալով կըսէր.

— Որչափ ծիծաղելի՛ ես.

Անկէ վերջը նստուելով ամուսնոյն դիւրը խելակորոյս կը համբուրէր զայն:

Չմեռ գիշեր մը տիկինը օրէրայէ՛ն սաստիկ մտած վերագարձաւ. Երկ-

Որբախնամիս գործադիր ժողովը Ձատկի առաջում ուղեւոր կեցողեցւոյ մէջ պնակ մըն ալ որբերու անուան շրջագայեցնել, հազիւ յաջողեցաւ սակայն իր կամքէն բոլորովին անկախ պատճառաւ միայն շրջաբակէն դուրս անկիւն մը գտնել ու հոն զետեղել գուրտէն խնդրուած սեղանի մը վրայ ափսոսայ մը և այս ալ եկեղեցւոյ արարողութեան կէսէն վերջ աչտու հանդերձ Որբախնամի խիստ ուրախ ու գոհ տայաւորութեան տակ մեկնեցաւ տեսնելով ժողովուրդին զէպի իրեն ու որբերու ունեցած այն համակրանքը, որուն շնորհիւ կարողացաւ մինչև 80.40 ֆրանք նշանակելի գումար մը հաւաքել:

Նոյնպէս Որբախնամի մասնաւորապէս գնահատման և շնորհակալութեան արժանի կը գտնէ Քարաճա Օթը բնակող ընկ կե. սարացի Ե. Թ. անուամբ ազնիւ երիտասարդի մը ստարաքը որ, Ձատկի առթիւ ընկերութեանս գործադիր ժողովոյ Տիար Ատե. նապետի տունը որոնելով ինքնաբերաբար որբերու նուիրած է վեց ֆրանք:

Վերայգրեալներէ զատ Որբախնամի շնորհակալութեամբ կը յիշատակէ մաքսատան հայ բեռնակիրներէ հաւաքաբար ընդունած 10.821/2 ֆրանք. ինչպէս նաև Ա. Գ. է մէկ ֆրանք:

Ի գիմաց Գործ. Ժողովոյ (Կնիք)

Վառնա, 4 Ապրիլ

Թիւրք խղերով ըսաւ գոհարավաճառը. Այրին աչքերը լայն բացաւ եւ առանց բան մը հասկնալու, բերանը բաց մնաց կայնած

Վերջապէս խանութպանին ըսաւ. — Դուք կըսէ՞ք... բայց հաւատացած է՞ք...

Գոհարավաճառը տեսնալով Լանթէնի զարմանքը կտրուկ կերպով ըսաւ.

— Կրնաք ուրիշ տեղ գիմել, հարցուցէ՞ք աւելի կուտան թէ ո՞չ, իմ կարծիքով 15 հազարէն աւելի չարժեք. վերագարձէ՞ք ինծի, եթէ ատկէ աւելի չը տան:

Լանթէն բոլորովին շուարեցաւ, մանեակը առնելով դուրս ելաւ, առանձնանալու եւ ինքնամիտօրեւելու պէտքը զգաց. Բայց երբ փողոց ելաւ, ուղեց խնդալ եւ մտածեց.

— Որչափ յիմար եմ. ճիշդ որ խենթ. եւ ինչ պիտի ըլլա՞ր, եթէ ես ալ անոր խօսքին հաւատայի. ազէկ գոհարավաճառ է, երբ կեղծ քարերը խկականներէն զանազանել չը գիտեր...

(Շարունակելի)

որոնք զրկուած էին Գրան կողմանէ: Ապստամբութիւնը օրէ օր զօրաւոր համեմատութեամբ կաւելնայ և Սուլթանին գերիշխանութիւնը ու «Բրէտիթ» մեծապէս վտանգուած են, մանաւանդ շնորհիւ սիրական և եմէնի զինուորական հրամանատար Մարէշալ Ապտուլահ փաշայի եղբունական արարքներուն:

Նաեւ եգիպտոսի մէջ ասկէց երեք տարի առաջ հիմնուած «Ճէմիեթ իւլ Համիեթ» անուն իսլամական կրօնային ընկերութիւնը կը նպաստէ մտքերը հետզհետէ պղտորելուն, վասն զի անիկայ նպատակ ունի գահընկեց ընել Սուլթանը և խալիֆայութիւնը յատկացնել Մէհմէմէտի շառաւիղներուն ու այսպէս օր մը կանգնել արաբական կայսրութիւնը:

Այս ընկերութիւնը որ կազմուած է մեծ իւլէմաներէ, կրկնապատկած է այս միջոցին իր շանքերը և մինչև Մէքքէ, Շամ Պաղատա և բոլոր մեծ կեդրոններու մէջ ճիւղեր արձակած: Սուլթանը յատ մտահոգ կը զբոսնուի ու մեծամեծ գժուարութիւններ կը զգայ ջլատելու համար անոնց ուժը:

Այն միակ միջոցը որուն պէտք է գիմէ Սուլթանը՝ լուրջ և մարդասիրական բարենորոգումներ կատարելն է փոխանակ ամեն օր կարգ մը անպարկեշտ լրտեսներու տեղեկագիրները ժամերով քննելու և երեւակայական դաւադրութիւններէն ստակալով ժամանակ կորսնցնելու կամ ամէն վայրկեան ոճրագործութիւններ և անարգ վրիժառութիւններ որոճալու:

ներէն և անխտիր կը տանջուին ստայոգ ամբաստանութիւններու և զրպարտութիւններու հետեւանօք որոնք կը կատարուին խառնակութիւններէ օգուտ քաղելու զոր լրտեսներէ և գրամ, առտիճան ու պատիւ ակնկալող սինթորներէ:

Իրաւ է թէ պուլկար յեղափոխականներու քաջութիւնը և յանգզնութիւնը անլուր է, սակայն անմեղները տանջելուն մէջ ալ ոչ օգուտ և ո՛չ ալ նպատակ կայ: Ճշմարիտ է նաեւ թէ՛ զէնք և տինամիտ մտցուցաւ Պոլսոյ մէջ—այս անգամ ոչ թէ մեղադրուած հայերէն այլ պուլկարներու կողմանէ—որպէսզի ի հարակին գործածուին, սակայն այն միջոցը որ ընարած է թուրք ստիկանութիւնը երբէք չարդարացնէր զինքը. ընդհակառակը անգամ մը եւս կը հաստատուի թէ տիրող ըէժիմը չը բաւեր և չը կրնար հանդարտեցնել, յանցաւորները ձերբակալել և ապրտամբութեան մը կամ յեղափոխութեան մը առաջքը առնել, վասնզի վայրագութիւններ գործելով ապստամբ ոգիները չեն կրնար զսպուիչ և բիրտ վարմունքը պատճառ կըլլայ որ գործիչները իրենց աչալրջութիւնը և քաջութիւնը կրկնապատկեն ու գործերնին առաջ տանին աւելի մեծ յաջողութիւնով: Ուրեմն հին պատմութիւնն է որ կը շարունակուի և արդէն Համիտական ըէժիմէն ուրիշ բան չէ կարելի սպասել:

Եմէնի մէջ արաբական յուզումները հետզհետէ կը զարթոյնանան: Համիտ-էտ-Տին Նէրիֆը զոր իր բազմաթիւ կուսակիցները «խալիֆ» հռչակած էին, վերջերս յալթեց թուրք զօրքերուն

Լանթէն զարմանքով ինքզինքին կը հարցնէր.

— Ինչպէս ան կրնար այնպէս զարգարուիլ, երբ անոր ողջ եղած միջոցին ամէն օր լաւ գիտի կը խմէր ինք եւ լաւ կուտէր. իսկ այսօր իր համեստ ոտճիկը իրեն անգամ չի բաւեր:

Լանթէն արդէն սկսած էր պարտք ընել, և ստիպուած էր զանազան միջոցներու գիմել ստակ գտնելու համար: Անգամ մը Լանթէն երբ սանթիմ մը իսկ չուներ, ամիսը լրանալուն դեռ շարաթ մը կար, որոշեց իր կնոջ թողած զարդերը զոր ինքը «պարապ բան»եր կը կոչէր, ծախել եւ այդ «կեղծիք»էն սպասուի. որոնք զինքը կը գրգռէին եւ աւելի բուռն կերպով կը զարթեցնէին իր թանկագին կնոջ յիշատակը:

Երկար ու բարակ կեղծ աղամանդները գննելէ վերջը, որոնց վրայ իր հանգուցեալ կինը ամէն օր բան մը կաւելցնէր, խոշոր եւ զեղեցիկ մանեակ մը ընտրեց, որ իր կարծիքով 7—8 ֆրանք պիտի արժէր, զբաւ գրպանը ու գնաց վաճառելու:

Լանթէն, պաշտօնատեղին գացած

Փուտաւ պէյ որ ֆրանսերէն չի գիտեր, թարգմանով կը խօսի և միեւնոյն գաղափարները յայտնելէ վերջ կաւելցնէ թէ ինք ոչ Պոլիս գառնալը խնդրած է և ոչ ալ դրամ ստացած ճանապարհածախի համար որ վստահութեան զեզոճմով ամբաստանուի. եթէ դեսպանէն դրամ առած է, այն ալ իրեն յանձնուած պաշտօնին կիրարկութեան համար և կամ Պոլսոյ մէջ ունեցած պաշտօնին ամսականներուն հաշուն եղած է: Գէմալի և Փուտալի փաստաբանը Պ. Ռաուլ Լանցէնպէրկ կը խնդրէ որ Փուտաւ առժամանակեայ կերպով թող տրուի ինչ որ կընդունուի հարցաքննիչ գատաւորէն և Փուտաւ կարճակուր կրկին հարցաքննուելու պայմանաւ:

Խնդիրը այս վիճակին մէջ կը գտնուի դեռ և Բարիզի թուրք գաղթականութիւնը հետաքրքրութեամբ կը սպասէ վախճանին:

ԹՈՒՐԲՈՅ ՎԻՃԱԿԸ

Պոլսէն ապրիլ 1 թուականաւ կը գրեն թէ՛ Տաճկաստանի վիճակը հետզհետէ ծանր հանգամանք մը կը կրտանայ և թուրք կառավարութիւնը շուարած է այն կարգ մը բարդ խնդիրներուն պատճառաւ որոնք կը կուտակուին այս միջոցին իր խելակորոյս Սուլթանին շուրջը:

Օր չըլլար որ Պոլսոյ ստիկանութիւնը ձերբակալութիւններ չի կատարէ պուլկարներէն որոնք Սօֆիաի Մակեդոնական կօմիթիէին հետ յարաբերութեան մէջ ըլլալ կը կարծեն և կենթագրուի թէ բորբական թիւթներ են. քահանաները և վանականները ազատ չեն այս ձերբակալութիւն-

րորդ օրը սկսաւ հազալ, իսկ ութ օրէն վերջ թողատապով մեռաւ:

Իրչ մնաց որ Պ. Լանթէն ալ իր վշտէն անոր հետ մեռնէր. այնքան յուսահատած էր որ ամուսան մը մէջ մագերը բոլորովին ձերմկցան: Առաւօտէն մինչև երեկոյ կուլար. հոգեկան տանջանքները թուլացուցին զինքը. շարունակ կը յիշէր կնոջ ժպիտը, ձայնը եւ անոր ամբողջ էութեան հրապոյրը:

Ժամանակը չը մեղմացուց Պ. Լանթէնի վիշտը, յաճախ իր պաշտօնատեղին աշխատած միջոցին, երբ ընկերները հանգստեան ժամերուն օրուան զանազան զէպերու մասին կը խօսակցէին, յանկարծ Լանթէնի աչքերը կը թրջուէին ու ան սարսափելի ցնցուտով մը կը սկսէր լալ:

Տիկինի սենեակը իր նախկին վիճակին մէջ պահուած էր, կահկարասին, զգեստները իրենց տեղը կը մնային. ու Պ. Լանթէն ամէն օր հոն կը փակուէր կնոջ մասին մտածելու համար. Բայց ապրելը հետզհետէ կը դժուարանար. իր ստացած ոտճիկը որով կինը ամբողջ տունը կը պահէր, այժմ միայն իրեն չէր բաւեր. ու

Լանթէն, պաշտօնատեղին գացած

ՀԵՐՔՈՒՍ

Տեղւոյ Մակեդոնական Գոմիթէն իր պարտքը կը համարէ ծանուցանել հայ հասարակութեան որ Վառնա հրատարակուող «Իսթօշնի Կրայ» թերթի մէջ մեր տուած հերքումը գրամ հանգանակողներու մասին, չի վերաբերիր տեղա գրամ հանգանակող հայ Յեզ. Գաշնակցութեան երկու պատուիրակներուն. «Իսթօշնի Կրայ»-ի մէջ այդ ոգով երեւցած տողերը ինքը խմբագրութիւնը աւելցուցած է, և կը ցուցնէ որ սեղանակաւ երկու հայ թերթեր վարագրեր են գոմիթէիս:

Գոմիթէն Հայ Յեզ. Գաշնակցութիւնը կը նշուի իբր բուն յեղափոխական կազմակերպութիւն մը և անոր անդամները հայ ազատագրութեան գործին նուիրուած մարդիկ, որոնք բնույթաբարբութիւն չունին անձանթ անձերու և եղեռնագործներու հետ՝ որոնց մասին ակնարկուած էր «Իսթօշնի Կրայ» թերթին մէջ:

Մակեդոնական Գոմիթէի Վառնայի Մասնաճիւղ Վառնա, 6 Ապրիլ 1901

ՀԱՆԵՆՈՒԿԸ ԿԻՍԱՆՈՒԾՈՒԱԾ

Պ. Կրօն Միքայէլեանի պատուիրակի հանգանակութիւնը Օտտոնայի մէջ, Հայկ. Կրթարանի համար, ճիշդ է. ատ ինք Պ. Միքայէլեան հաստատեց իր երկու ուսուցիչներու միջոցաւ «ճարժում» խմբագրին դիմելով որ շարաբաստիկ նամակէն «ի սէր մարդասիրութեան» պատուիրակին անունը հանուի. և եթէ տպագրուած թերթը արդէն տարածուած չէ, ոչնչացուի ու իր ծախքով նոյն համարը նորէն տպագրուի: Թերթիս խմբագիրը մերժեց:

Ասով Հայկական Կրթարանին վերաբերեալ այդ հանելուկին մէկ մասը լուծուեցաւ. հիմա կը մնայ պարզել թէ յիշուած այդ հանգանակութիւնը կատարուած է որքան անունով, թէ ո՞չ:

Մեզմէ աւելի այդ մասը պարզել պիտի ջանան նոյն կրթարանին ուսուցիչները—Օր. Իսկուհի Նորիկեան, Պ. Պ. Պոնճուքեան երուանդ Սրմաքէշխանլեան, Արգար Պարսամեան. որովհետեւ եթէ ճիշդ ըլլայ Պարոն Միքայէլեանի որբերուն անունը շահագործելը, այն ժամանակ հասարակութիւնը պիտի մտածէ որ այդ բոլոր անձնաւորութիւնները համամիտ եղած են այդ ձեւով հանգանակութիւն մը ընել Միքայէլեանին վրայ իրենց ունեցած առնելիքները գանձելու համար:

Չը մոռնանք այստեղ հազոր-

դել որ մեր լսածին համեմատ կրթարանի ուսուցիչներէն միայն Պ. Պ. Պոնճուքեան նախապէս տեղեկութիւն ունի եղբոր այդ հանգանակութեան մասին. հանգանակութիւնը գաղտնի պահուել է ոչ միայն հասարակութենէն, այլ և Հայկական Կրթարանի միւս ուսուցիչներէն: Ինչո՞ւ այդ գաղտնապահութիւնը պարզ հանգանակութեան մը համար, և ինչո՞ւ միայն Պ. Պ. Պոնճուքեանի կը վստահուի այդ գաղտնիքը:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գարակէօզեան գումարի տոկոսէն 600 լիրա յանձնուեցաւ հիւանդանոցի հոգաբարձութեան անցեալ շաբթու, քաղաքական ժողովի որոշման համաձայն:

— Յայտնի բարերարուհի տիկ. Նատիրեան Թիֆլիզի դուրսը ընդարձակ գետին մը նուիրել է՝ ներսէսեան գարոցը անոր վրայ կառուցանելու համար: Այս դրայրոցն ազմկալից ու անպատշաճ տեղ մը կը գտնուի այժմ:

— Պէրպէրեան վարժարանի յորելեանի մասնաժողովը կը շարունակէ խորհրդակցել պատրիարքի նախագահութեամբ, նուիրատուութիւններ տրուել են, պատրիարքն ալ տասը ոսկի ստորագրուել է:

— Սամաթիոյ նուինեան վարժարանը ամսակաւ 400 դրուշի հասոյթ մը ունի ծաղկաշինութենէն:

— Իզմիրի ազգայինները կը պատրաստուին տեղւոյն ազգային հիւանդանոցի հաստատութեան հարկւրամեայ տարեգարձը տօնելու համար:

— Սիւրբաթն կը գրեն Արեւելքի թէ՛ 1900ը եկեղեցւոյ և վարժարանաց համար բարեյաջող և բեղմնաւոր տարի մը եղաւ, նորանոր ունեցանք երկու որահ. մէկը մանչերու և միւսը աղջկանց ծաղկոցի յատկացուած և ուրիշ հինգ երկրորդանի սենեակներ, որքազոցի համար, Տեղապահ հայրը գործնականապէս հաստատեց թէ կարելի է այդ շինութիւնները իրականացնել: Երեսնութեանց միջոցին երբ հորի ջուրը կը սպառուի, մեր հայրսուրբը չի գեղեւիւր կուժը տաս բարայի խմելու անուշ ջուրով առաջ տանիլ շինութիւնները, ինչ որ է, անգամ մը կը լսուի Սիւրբաթի մէջ. Իսկ երբ գրամը հատնելով ձրի վարպետ չի կըրցաւ գտնել, հայրսուրբը իբր որմնագիր վարպետ քանի մը շարաթ աշխատեցաւ և պակաս մնացած մասերը վերջացուց: ապշեցնելով տեղացի վարպետները:

Ենորհիւ տեղապահին մասնաւոր հոգածութեան ամենայն կանոնաւորութեամբ կընթանան երկուսն վարժարանները թէեւ պատ-

րիարքարանէն զրկուած դասագիրքերը տակաւին չեն հասած բայց կրթասէր տեղապահը 30 ոսկի արժողութեամբ մեթոտաւոր դասագրքեր փոսթով բերել տալով՝ յաջողեցաւ վարժարանները ուսուցն. խորհրդոյ ծրագրին համապատասխանող ուղղութեան մէջ գնել:

— Ստացանք Գաշնակցութեան տասնամեակին նուիրուած «Գրուշակ» համարը:

«Գրուշակ»ը զարգարուած է հայրենիքի սեղանի վրայ զոհուած բոլոր այն հերոսներուն պատկերներովը, որոնց լուսանկարները եղբր են խմբագրութեան տրամադրութեան տակ:

— Բարիզի մէջ Պ. Սիմէոն Հասումեանի խմբագրութեամբ «Ժամանակ» անունով գրական, հասարակական, գեղարուեստական և քաղաքական հանդէս մը պիտի հրատարակուի: Միւս համարի մէջ յայտարարութիւնը պիտի գնենք: Հանդէսը լոյս պիտի տեսնէ յուլիսին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Գ Ի Ա

Սուլթանը Պոլսոյ ուսական գեսպանին ստիպումներուն վրայ հրամարեցուցեր է յունաց պատրիարքը որ պետն է միանգամայն ընդհանուր Օրթոտոքս եկեղեցւոյ և նորի մը ընտրութեան ձեռնարկելու հրամայած է:

— Պոլսէն կը գրեն թէ ակադեմիս անձեր կը վկայեն որ Սուլթանը երկրաշարժին ժամանակ երէք ցոյց չէ տուած այն ենթադրական քաջութիւնը որուն համար շնորհաւորականներ ստացաւ ոչ միայն Վիլհելմէն և էտուարտէն այլ նաեւ Ֆրանսայի հանրապետութեան նախագահ Լուպէէն:

Կը պատմեն թէ երբ ցնցումը զգացուեցաւ, Սուլթան Համիտ տեղէն ցատկեց, իջաւ գահի երեք աստիճաններէն և զէպի գուռը սուրաց. սակայն հոն տեսնելով որ պալատականներուն խուճապը մեծ է և իրմով ոչ ոք կը զբաղի, խոհեմութիւն համարեց աւելի առաջ չեղթալ քան ինքզինքը վտանգել խուճապէն և առիթէն օգուտ քաղել ուզող երեւակայական արքայազուների մը ձեռներուն մէջ:

Այս պատճառաւ է որ չը կըրցու սրահէն դուրս նետուիլ և ահա լիօրէն Կցգունած գողգալով ամթուի մը վրայ ինկաւ որմէ յետոյ իր տեղը վերադարձաւ և հրամայեց որ պայրամի արարուցութիւնը շարունակուի: Իր շուրջինները մտածելով որ իրենց փախուստին համար ծանրապէս պիտի յանդիմանուին և պատժուին, մէկ խորհուրդ ըրին ու դուրսը տարածեցին թէ Սուլթանը երբէք չը վախցաւ, որ-

պէս զի հաճելի երեւնան և պատիժ ազատին, ինչ որ յաջողեցան մանաւանդ երբ երեք մեկ ազգերու պետերէն շնորհաւորականներ հասան:

— Սուլթանը համաձայնեց է անսալ յունաց կրօնական ժողովուրդումին և պատրիարքը հրամարուած ընդունիլ ֆրանսական թերթերը յոյներուն այդ յաջողութիւնը ուս գեսպանի միջամտութեան կը վերագրեն:

Պատրիարքարանը առժամայ փոխանորդ հրատարած է Պրուսայի առաջնորդ նախնաէլ եպիսկոպոսը:

Թ Ո Ւ Ր Ս Ի Ա

Երոպական թերթերը կը հաղորդեն որ գրուգէտ Թօլսթոյ Մսկուայէն աքսորուած է իր գիւղը «Կասնոյա Բոլիանայ» իսկ իր որդին տունը բանտարկուած է:

— Լեհական թերթերը կը գրեն թէ մօտեքս ձարի թիկնապահ սպաներէն մին յանկարծ կը մտնայ ձարին առանձնտան. եակը՝ վերջինս իսկոյն ատրճանակը կառնէ և սպան կոպանէ:

Մարտ 28ին բրքորօր Բոպէտոնոցէվին վրայ ատրճանակարձակող Լաքովսկիին դատուան տաժանակիր աշխատութեան գատապարտուած է:

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Վերջին հեռագիրները կը հաղորդեն որ Բէքինի կայսերական պալատը, որուն մէջ մարաշախտիմս Վալտերդէ իր սպայակոյտով կը բնակէր, հրդեհուած է. դաշնակից զօրքելու հրամանատարը հազիւ կրցեր է ինքզինքը ազատել պատուահանէն դուրս ցատկելով: Բացի քանի մը պատերազմական թուղթերէ ամէն բան այրուած է:

— Բէքինի մէջ երկու մանտարիներ որոնք կը մեղադրուէին խռովութիւնները քաջալերելու մէջ, գլխատուել են:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Միլնէր արգէն սկսած է անգլիական դատարաններ հաստատել թրանսվալի մէջ:

— Քրիկէր Ամերիկայ չի պիտի երթայ, որովհետեւ համոզուել է թէ անկէց ալ օգուտ մը չի կրնար սպասել:

ОТГОВОРНИКЪ:
Д-ръ М.Х.Г.РДИЧЪ ВАРТАНЪ
Печ. «Взаимность» — Варна.